23.10.2025թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ տեղեկատվություն	**Информация по вопросам повестки дня внеочередного общего собрания акционеров ОАО “ЮНИБАНК” 23.10.2025г.**
Հարց 1. Կանոնադրական հիմնադրամի համալրմամբ պայմանավորված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունները հաստատելու մասին: Բանկի զարգացման ռազմավարության շրջանակներում առաջադրված խնդիրների իրագործման նպատակով՝ Բանկի Խորհրդի կողմից որոշում էր կայացվել իրականացնել թվով 3,846,154 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ յուրաքանչյուրը 390 ՀՀ դրամ անվանական արժեքով և 390 ՀՀ դրամ տեղաբաշխման արժեքով, բաց բաժանորդագրության միջոցով: Հրապարակային առաջարկը սկսվել է 12.08.2025թ.-ին և ավարտվել 12.09.2025թ.-ին՝ ողջ առաջարկված ծավալի հաջող տեղաբաշխմամբ: Լրացուցիչ թողարկման Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկի կանոնադրական հիմնադրամը կավելանա 1,500,000,060 ՀՀ դրամով և կկազմի 24,925,447,290 ՀՀ դրամ:	**Вопрос 1.** Об утверждении изменений в Уставе ОАО “ЮНИБАНК” в связи с пополнением уставного капитала. Для реализации поставленных задач в рамках стратегии развития Банка, Советом Банка было принято решение осуществить дополнительный выпуск конвертируемых привилегированных акций класса “Г” с фиксированным годовым дивидендом в количестве 3,846,154 штуки по номинальной стоимости 390 драм РА и по цене размещения 390 драм РА каждая, посредством открытой подписки. Публичная оферта была начата 12.08.2025г. и завершилась 12.09.2025г. с успешным размещением всего предложенного объема. В результате размещения привилегированных акций класса “Г” дополнительного выпуска размер уставного капитала Банка увеличится на 1,500,000,060 драм РА и составит 24,925,447,290 драм РА.
Հարց 2. Փոփոխությունների և լրացումների իրականացմամբ պայմանավորված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին: Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական կատարելագործման շրջանակներում առաջարկվում է Բանկի Կանոնադրությունում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ կապված որոշ հոդվածների և դրույթների՝ գործող օրենսդրական պահանջներին համապատասխան վերաշարադրման, Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ցանկի վերաձևակերպման, բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու ժամկետների և ձևի, Խորհրդի նիստերի անցկացման ձևի հստակեցման, այդ թվում առցանց հարթակների օգտագործմամբ, Վարչության կողմից ներքին իրավական ակտերի հաստատման և դրանք Խորհրդի հաստատմանը ներկայացնելու ընթացակարգի հստակեցման, Բանկի Ներքին աուդիտի վերաբերյալ դրույթների արդիականացման, ինչպես նաև մի շարք տեխնիկական բնույթի փոփոխությունների կատարման հետ: Վերոնշյալ փոփոխություններն ու լրացումները նախնական հավանության են արժանացել Խորհրդի 11.08.2025թ. որոշմամբ:	**Вопрос 2.** Об утверждении Устава ОАО “ЮНИБАНК” в новой редакции в связи с внесением изменений и дополнений. В рамках постоянного совершенствования системы корпоративного управления Банка предлагается внести изменения и дополнения в Устав Банка, касающиеся переизложения некоторых статей и положений в соответствии с действующими законодательными требованиями, переформулировки перечня финансовых операций, осуществляемых Банком, конкретизации сроков и формы уведомления акционеров о созыве общего собрания акционеров, формы проведения заседаний Совета, в том числе с применением онлайн платформ, уточнения порядка утверждения Правлением внутренних правовых актов и их представления на утверждение Совета, актуализации положений о Внутреннем аудите Банка, а также внесения ряда правок технического характера. Вышеизложенные изменения и дополнения предварительно одобрены решением Совета от 11.08.2025г.
Հարց 3. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը», «Խորհրդի կանոնակարգը» նոր խմբագրությամբ հաստատելու, «Խորհրդի ձևավորման քաղաքականությունը» ուժը կորցրած ճանաչելու մասին: Բանկի՝ ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու և սահմանված պահանջներն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, գործող «Բաժնետերերի ընդհանուր ժողովի	**Вопрос 3.** Об утверждении “Положения о подготовке и проведении общего собрания акционеров”, “Положения о Совете” в новой редакции, упразднении “Политики формирования Совета” ОАО “ЮНИБАНК”. В связи с присоединением Банка к Кодексу корпоративного управления Республики Армения и необходимостью реализации установленных требований, действующий “Порядок о подготовке и проведении общего

նախապատրաստման և վարման կարգը» վերանայվել և վերաշարադրվել է որպես Կանոնակարգ, «Խորհրդի կանոնակարգն» ամբողջությամբ խմբագրվել է: **<u>Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգ</u>** Հեռակա քվեարկությամբ որոշումներ կայացնելու կարգը կարգավորող գլուխ 4-ը լրացվել է նոր դրույթներով՝ նախատեսելով, որ Բանկը ապահովում է հեռակա քվեարկության ժամանակ բաժնետերերի և Խորհրդի, Վարչության անդամների միջև հաղորդակցվելու հնարավորությունը, և որ անկախ Ժողովի անցկացման կարգից՝ բաժնետերերի ձայները ունեն հավասար ուժ: Քվեարկության անցկացման կարգը կարգավորող գլուխ 12-ը լրացվել է նոր կետով, հետևյալ բովանդակությամբ. «Ընդհանուր ժողովի գործընթացները, ձևաչափը և ընթացակարգերը պետք է ապահովեն հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի նկատմամբ: Բաժնետերը պետք է տեղեկացված լինի ընդհանուր ժողովի անցկացման կանոններին և ընթացակարգերին, այդ թվում՝ քվեարկության կարգին:»: Ընդհանուր ժողովի արձանագրությունների վարման կարգը սահմանող գլուխ 16-ը լրացվել է նոր կետերով, որոնք նախատեսում են Բանկի բաժնետերերի՝ Ժողովի արձանագրություններին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև Ժողովի նյութերը թղթային և էլեկտրոնային եղանակով պահպանելու կարգը: Արձանագրությունների, դրանց հավելվածների և նյութերի պահպանման պատասխանատվությունը հանձնարարված է ժողովի քարտուղարին: Կանոնակարգը լրացվել է նոր՝ 18-րդ գլխով, որով սահմանվում է Խորհրդին, Վարչությանը և արտաքին աուդիտորին բաժնետերերի կողմից հարցեր տալու հնարավորություն ընձեռելու, ինչպես նաև գրավոր ձևով պատասխաններ ստանալու և դրանք Բանկի պաշտոնական կայքէջում տեղադրելու կարգը: Մանրամասնեցվել են ժողովին մասնակցելու իրավունքը և բաժնետերերին ծանուցման կարգը սահմանող գլուխները, ավելացվել են սահմանումների ցանկը, ուղեկցող օրենսդրական ակտերի ցուցակը, կատարվել են ձևակերպումների և հղումների տեխնիկական ուղղումներ: **<u>Խորհրդի կանոնակարգ</u>** Ավելի մանրամասն նկարագրվել է Խորհրդի ձևավորման կարգը, Խորհրդի անդամների առաջադրման, ընտրության և լիազորությունների դադարեցման պայմանները, նրանց դերը, գործառույթները, իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, ինչպես նաև նիստերի անցկացման և արձանագրման կարգը՝ համապատասխան գլուխների և կետերի ավելի մանրամասն տարանջատմամբ: Ավելացվել են Խորհրդի էթիկական հանձնառությունը նկարագրող դրույթները, սահմանումների ցանկը և ուղեկցող օրենսդրական ակտերի ցուցակը: Հաշվի առնելով, որ «Խորհրդի կանոնակարգի» նոր խմբագրությունը ներառում է 01.12.2023 թ.-ին հաստատված «Խորհրդի ձևավորման քաղաքականություն» ներքին իրավական ակտով նախատեսված դրույթներ, «Խորհրդի կանոնակարգի» հաստատվելու դեպքում առաջարկվում է	собрания акционеров” был пересмотрен и переизложен в виде Положения, “Положение о Совете” было комплексно отредактировано. **<u>Положение о подготовке и проведении общего собрания акционеров</u>** Глава 4, регулирующая порядок принятия решений посредством заочного голосования, дополнена новыми положениями, предусматривающими, что Банк обеспечивает возможность коммуникации между акционерами и членами Совета и Правления при проведении заочного голосования, и что голоса акционеров имеют одинаковую силу вне зависимости от формы проведения собрания. Глава 12, регулирующая порядок проведения голосования, дополнена новым пунктом следующего содержания: “Процедура, формат и порядок проведения общего собрания должны обеспечивать равное отношение ко всем акционерам. Акционер должен быть проинформирован о правилах и порядке проведения общего собрания, в том числе порядке голосования”. Глава 16, определяющая порядок протоколирования общего собрания, дополнена новыми пунктами, предусматривающими право акционеров Банка на ознакомление с протоколом собрания, а также порядок хранения материалов собрания как на бумажных носителях, так и в электронном виде. Ответственность за хранение протокола, приложений и материалов к нему возложена на секретаря собрания. Положение дополнено новой главой 18, устанавливающей порядок предоставления акционерам возможности задавать вопросы Совету, Правлению и внешнему аудитору, а также порядок получения ответов в письменной форме и их размещения на официальном сайте Банка. Детализированы главы, регулирующие право участия в собрании и порядок уведомления акционеров; добавлен перечень определений, список сопроводительных законодательных актов; внесены технические корректировки формулировок и ссылок. **<u>Положение о Совете</u>** Более детально описаны порядок формирования Совета, условия выдвижения, избрания и прекращения полномочий членов Совета, их роли, функции, права, обязанности и ответственность, а также порядок проведения и протоколирования заседаний, с более подробной разбивкой на соответствующие главы и пункты. Добавлены положения, определяющие этические обязательства Совета, перечень определений, список сопроводительных законодательных актов. С учетом того, что новая редакция “Положения о Совете” включает аспекты, предусмотренные “Политикой формирования Совета”, утвержденной 01.12.2023г., в случае утверждения “Положения о Совете” предлагается признать утратившей силу “Политику формирования Совета”. Вышеизложенные изменения и дополнения предварительно одобрены решением Совета от 11.08.2025г.

միաժամանակ ուժը կորցրած ճանաչել «Խորհրդի ձևավորման քաղաքականությունը»: Վերոնշյալ փոփոխություններն ու լրացումները նախնական հավանության են արժանացել Խորհրդի 11.08.2025թ. որոշմամբ:	
Հարց 4. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Հրահատ Արզումանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 26.09.2025թ. որոշմամբ առաջարկվում է վաղաժամկետ դադարեցնել Խորհրդի անդամ Հրահատ Արզումանյանի լիազորություններն իր դիմումի համաձայն:	**Вопрос 4.** О досрочном прекращении полномочий члена Совета ОАО “ЮНИБАНК” Граата Арзуманяна. Решением Совета ОАО “ЮНИБАНК” от 26.09.2025г. предлагается досрочно прекратить полномочия члена Совета Граата Арзуманяна на основании его заявления.
Հարց 5. Վախթանգ Աբրահամյանին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ ընտրելու մասին: «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 26.09.2025թ. որոշմամբ առաջարկվում է ընտրել Վախթանգ Աբրահամյանին որպես Խորհրդի անդամ՝ հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների, ռիսկերի կառավարման և կիբերանվտանգության ոլորտում վերջինիս բազմամյա փորձը, ինչպես նաև ֆինանսաբանկային համակարգում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու հանգամանքը: **Խորհրդի անդամի թեկնածուի կենսագրական տվյալներ** Վախթանգ Աբրահամյան Գևորգի Ծննդյան տարեթիվը՝ 14.02.1975թ. **Կրթությունը՝** 1991-1996թթ.՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ՝ «Արտադրության տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտացմամբ: 2004թ.՝ Բոստոնի Թաֆթսի համալսարանի Ֆլետչերի Իրավունքի և Դիվանագիտության դպրոցում հատուկ կառավարչական վեցամսյա դասընթաց՝ «Համաշխարհային առևտուր, ֆինանսներ և էկոնոմիկա»: **Վերապատրաստումներ՝** 2001թ.՝ վերապատրաստում Ֆրանսիայի և Իսպանիայի բանկերում՝ փորձի փոխանակում վճարային ծառայությունների և պլաստիկ քարտերի ոլորտում: 2002թ.՝ վերապատրաստում Հոլանդիայի Ազգային Բանկում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վերահսկողության ոլորտում և աուդիտի ոլորտում: 2003թ.՝ վերապատրաստում ԱՄՆ Դաշնային Ռեզերվային Համակարգում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վերահսկողության ոլորտում և աուդիտի ոլորտում: 2012թ.՝ Կոլումբիայի համալսարանի բիզնես-դպրոց (ընդհանուր ղեկավարում և առաջնորդություն): 2015թ.՝ Քեմբրիջի համալսարան՝ թվային փոխակերպում: **Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարիների ընթացքում** 2015-2022թթ.՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ: 2018-2021թթ.՝ ԱՖԻ (Alliance for Financial Inclusion) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ECAPI) խորհրդի նախագահ:	**Вопрос 5.** Об избрании Вахтанга Абрамяна членом Совета ОАО “ЮНИБАНК”. Решением Совета ОАО “ЮНИБАНК” от 26.09.2025г. предлагается избрать Вахтанга Абрамяна членом Совета, учитывая его многолетний опыт в сфере информационных технологий, риск-менеджмента и кибербезопасности, а также деятельность на руководящих позициях в финансово-банковской сфере. **Биографические данные кандидата для избрания в члены Совета** Вахтанг Геворкович Абрамян Дата рождения: 14.02.1975г. **Образование** 1991-1996гг. - Ереванский институт народного хозяйства, по специальности “Экономика производства и управление”. 2004г. - школа Права и Дипломатии им. Флетчера при Университете Тафтса в Бостоне, специальный управленческий шестимесячный курс “Всемирная торговля, финансы и экономика”. **Переподготовка** 2001г. – переподготовка в банках Франции и Испании, обмен опытом в сфере платежных услуг и пластиковых карт. 2002г. – переподготовка в Голландском Национальном Банке в сфере контроля информационных технологий и в сфере аудита. 2003г. – переподготовка в Системе Федерального Резерва США, в сфере контроля информационных технологий и в сфере аудита. 2012г. - Бизнес-школа Колумбийского университета (общее руководство и лидерство). 2015г. – Кембриджский университет, цифровая трансформация. **Трудовая деятельность за последние 10 лет** 2015-2022гг. – заместитель председателя Центрального банка РА. 2018-2021гг. – председатель Совета АФД (Alliance for Financial Inclusion) Восточной Европы и Центральной Азии. 2022-06/2025гг. - исполнительный директор группы компаний холдинга “Фастекс” (РА, ОАЭ, Мальта, Гонконг) С 06/2025гг. по настоящее время – член Совета / советник акционера

2022-06/2025թթ.՝ «Ֆասթեքս» հոլդինգի (ՀՀ, ԱՄԷ, Մալթա, Հոնկոնգ) ընկերությունների խմբի գործադիր տնօրեն: 06/2025թ. առ այսօր՝ «Բադալյան Եղբայրներ» ընկերությունների խմբի խորհրդի անդամ / բաժնետիրոջ խորհրդական 07/2025թ. առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Միջազգային հարաբերությունների գծով Խորհրդի նախագահի խորհրդական: Չի հանդիսանում «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր:	группы компаний “Бадалян Ехбайрнер” С 07/2025г. по настоящее время - советник председателя Совета ОАО “ЮНИБАНК” по международным отношениям. Не является акционером ОАО “ЮНИБАНК”.